# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2025 թվականի N 2405

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1826 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ժորա Գևորգի Ոսկանյանի 11.06.2025թ. թիվ 02/8139 դիմումը, 19.02.2025 թվականին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 747 (Նոտարական ակտի կոդ: 843-20250219-84-8772418) վկայագիրը, 13.11.2013 թվականին տրված մահվան մասին թիվ ԲԱ778815 վկայականը Վանաձոր համայնքի ղեկավարի 13 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1826 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 13 դեկտեմբերի 2023 թվականի թվականի «Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի, Տավրոս (նախկին Ժդանով) թաղամաս 8-րդ փողոց, թիվ 14 հասցեի բնակելի տանը, շինությունների և հողամասի նկատմամբ Ժորիկ Գուրգենի Ոսկանյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1826 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Որոշման նախաբանում՝ «Ժորիկ Գուրգենի Ոսկանյանի (ծնված՝ 15.05.1941թ.) 13.03.2023թ. թիվ 02/3826 դիմումը,» փոխել «Ժորա Գևորգի Ոսկանյանի 11.06.2025թ. թիվ 02/8139 դիմումը» բառերով, իսկ «07.02.2014թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 438 վկայագիրը» բառերից հետո լրացնել «19.02.2025 թվականին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 747 (Նոտարական ակտի կոդ: 843-20250219-84-8772418) վկայագիրը» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 10
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 նոյեմբերի 2025 թվականի N 2406

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ԿԱՆԱԿԱ ԹԱՂԱՄԱՍ, 27/11-1 ԵՎ ՏԱՐՈՆ-4 ԿԱՆԱԿԱ 27/11-2 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԿ ՌՈԲԵՐՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայկ Ռոբերտի Հովհաննիսյանի 20.10.2025 թվականի թիվ 02/15706 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /267213/, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 31082012-06-0181 և 17082012-06-0170 վկայականները, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 16-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Վանաձոր համանք, Վանաձոր քաղաքի Տարոն-4 Կանակա թաղամաս, 27/11-1 և Տարոն-4 Կանակա 27/11-2 հասցեներում գտնվող Հայկ Ռոբերտի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող 0.00480հա ընդհանուր մակերեսով հողամասերը համաձայն՝ «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:

2. Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տարոն-4 Կանակա թաղամաս, 27/11-1 և Տարոն-4 Կանակա 27/11-2 հասցեներում գտնվող 0.00480հա ընդհանուր մակերեսով հողամասերի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Տարոն-4 Կանակա թաղամաս, 27/2 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 10
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 նոյեմբերի 2025 թվականի N 2407

### ՍՎԵՏԼԱՆԱ ՍԱՐԳՍԻ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՐԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սվետլանա Սարգսի Ասլանյանի (1954թ.) դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 12.10.2023թ.-ի կնքված պայմանագիրը, Վանաձոր համայնքի ղեկավարի 2016 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 615-Ա կարգադրությամբ ստեղծված լքված և թալանված բնակարանների տնօրինման հանձնաժողովի 2025թ. սեպտեմբերի 22-ին կայացած նիստի արձանագրությունը, Վանաձոր համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 21-ի <<Լքված և թալանված բնակարանների հետագա տնօրինման մասին>> թիվ 82-Ն որոշումը և 2006 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 104-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 1997 թվականի մարտի 14-ի թիվ 51 որոշմամբ՝ որոշում եմ.

1.Հանձնարարել Քաջիկ Թադևոսյանին՝ (անձնագիր՝ AT0695328, տրված՝ 018-ի կողմից 12/03/2021թ.-ին, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ Փ., 37Շ. 28ԲՆ.) դիմելու ՀՀ կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Վանաձոր քաղաքի Ավետիսյան փողոցի թիվ 55/57 շենքի թիվ 90 մեկ սենյականոց բնակարանի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

2.Վանաձոր քաղաքի Ավետիսյան փողոցի թիվ 55/57 շենքի թիվ 90 մեկ սենյականոց բնակարանը հատկացնել Սվետլանա Սարգսի Ասլանյանին (ծնված 1954թ.) :

3.Քաջիկ Թադևոսյանին՝ (անձնագիր՝ AT0695328, տրված՝ 018-ի կողմից 12/03/2021թ.-ին, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ Փ., 37Շ. 28ԲՆ.) Սվետլանա Սարգսի Ասլանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով 10 (տասը) տարի ժամկետով կնքել բնակարանի վարձակալության պայմանագիր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 10
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 նոյեմբերի 2025 թվականի N 2408

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՆԱԿԻ ՓՈՂՈՑ 8-1/2, ԲԱՆԱԿԻ ՓՈՂՈՑ 8-8 ԵՎ ԲԱՆԱԿԻ ՓՈՂՈՑ 8-6 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահ՝ Առնակ Ավետիսյանի լիազորված անձ՝ Վարդան Ալեքսանյանի 12.09.2025 թվականի թիվ 02/13280 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը/260729/, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28112022-06-0002, 02042021-06-0038 և 13082021-06-0044 վկայականները, 05.03.2025 թվականին տրված լիազորագիր ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011թ. 1920-Ն որոշման N1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշումով՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Վանաձոր համանք, Վանաձոր քաղաք Բանակի փողոց 8-1/2, Բանակի փողոց 8-8 և Բանակի փողոց 8-6 հասցեներում գտնվող Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող 2.19497հա ընդհանուր մակերեսով հողամասը՝ համաձայն թիվ 28112022-06-0002, 02042021-06-0038 և 13082021-06-0044 վկայականների:

2. Փոխել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք Բանակի փողոց 8-1/2, Բանակի փողոց 8-8 և Բանակի փողոց 8-6 հասցեներում գտնվող 2.19497հա ընդհանուր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

3.Փոխել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Բանակի փողոց 8-1/2, Բանակի փողոց 8-8 և Բանակի փողոց 8-61 հասցեներում գտնվող 6596.06քմ մակերեսով շինությունների

գործառնական նշանակությունը հասարակականից՝ բնակելիի, օգտագործման նպատակը փոխել շենքի:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Բանակի փողոց, 8/11 շենք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2025 թվականի N 2409

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂ ԹԻՎ 122Ա-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմինե Նիկոլայի Դալլաքյանի 27.10.2025 թվականի թիվ 16100 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1946170 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Վարդանանց փող. թիվ 122ա/1 հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Վարդանանց փողոց, 122/8 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 նոյեմբերի 2025 թվականի N 2410

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 8 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՍԵՆԻԿ ԳԵՎՈՐԳԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վարսենիկ Գևորգի Պետրոսյանի (ծնված՝ 07.09.1961թ.) 12.08.2025 թվականի թիվ 02/11395 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 29.09.2024 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 7193 վկայագիրը (նոտարական ակտի կոդը: 594-20240920-84-8352867), 29.09.2024 թվականի ՀՀ արդարադատության նախարարության «Լոռու մարզ» նոտարական տարածքի նոտար Անժելա Յուրիկի Կիրակոսյանի թիվ 7192 որոշումը (նոտարական ակտի կոդը: 594-20240919-215-8351864), 30.06.1994 թվականի սեփականության վկայագիրը, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 20.08.2025 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-203/25 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Ն. Ստեփանյան փողոց 3-րդ նրբանցք թիվ 8 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 332.8քմ մակերեսով հողամասը և դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1957-1995թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 332.8քմ, որը հանդիսանում է ընդհանուր համատեղ հողամաս կից տնատիրության հետ՝ Ն. Ստեփանյան փողոց, 2-րդ նրբանցք թիվ 6 հասցեի, որը նույնպես պատկանում է Վարսենիկ Գևորգի Պետրոսյանին:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վարսենիկ Գևորգի Պետրոսյանի սեփականության իրավունքը պ մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ն. Ստեփանյան փողոց 3-րդ նրբանց թիվ

8 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 332.8քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ համաձայն «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

332.8քմ մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր համատեղ հողամաս կից տնատիրության հետ Ն. Ստեփանյան փողոց, 2-րդ նրբանցք թիվ 6 հասցեի, որը նույնպես պատկանում է Վարսենիկ Գևորգի Պետրոսյանին:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ն. Ստեփանյան փողոց, 2-րդ նրբանցք, 8 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

11 նոյեմբերի 2025 թվականի N 2411

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Պ. ՍԵՎԱԿԻ ՓՈՂՈՑ 47/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՌՈՒՍԼԱՆ ՎԵՐՄԻՇԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուսլան Վերմիշի Գաբրիելյանի 19.01.2024 թվականի թիվ 02/1324 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05112025-06-0005 վկայականը, 13.05.2024թ.. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Պ. Սևակի փողոց, 47/2 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 22.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 19.9քմ) ավտոտնակը 43320 (քառասուներեք հազար երեք հարյուր քսան) ՀՀ դրամ և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 22.0քմ մակերեսով հողամասը 97720 (իննսունյոթ հազար յոթ հարյուր քսան) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Ռուսլան Վերմիշի Գաբրիելյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Ռուսլան Վերմիշի Գաբրիելյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 նոյեմբերի 2025 թվականի N 2412

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՆԱԿԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 36 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԿ ԱՐՏԱՇԵՍԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայկ Արտաշեսի Մխիթարյանի (ծնված՝ 13.05.1948թ.) լիազորված անձ Սարգիս Կորյունի Կիրակոսյանի 19.09.2023 թվականի թիվ 02/16113 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 07.10.2022 թվականի թիվ6416 լիազորագիրը (նոտարական ակտի կոդը: 594-20221007-90-6332155), 14.08.1992 թվականի անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունը, 02.10.2025 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-232/25 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Բանակի փողոց թիվ 36 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 300.0քմ և նրան կից 299.6քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1951-1994թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 599.6քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Հայկ Արտաշեսի Մխիթարյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Բանակի փողոց թիվ 36 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 300.0քմ մակերեսով հողամասին կից 299.6քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Հայկ Արտաշեսի Մխիթարյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Բանակի փողոց թիվ 36 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 599.6քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ համաձայն «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Բանակի փողոց, 36 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2025 թվականի N 2413

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 21 ՇԵՆՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռոմանոս Վիլյամի Մելիքյանի 29.12.2023.թ. թիվ 02/23487 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Գասպար Վեքիլյանի» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 29.12.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023GJUQEX), 13.05.2024թ Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Շինարարների փողոց թիվ 21 շենքի արևմտյան մասում գտնվող ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 22.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 21.05քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 22.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

Ամրակցված է բետոնային հիմքերով և հանդիսանում է հիմնական շինություն, շինությունը ենթակա է պետական գրանցման:

2.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված

ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի, Շինարարների փողոց թիվ 21 շենքի արևմտյան մասում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Շինարարների փողոց, 21/2 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

11 նոյեմբերի 2025 թվականի N 2414

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 13/24 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՄԵԼԱՆՅԱ ՀԵՆՐԻԿԻ ՄԱՏԻՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մելանյա Հենրիկի Մատինյանի 31.10.2023 թվականի թիվ 02/18915 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28082025-06-0057 վկայականը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ա. Իսահակյան փողոց 1-ին նրբանցք 13/24 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 57.2քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 48.4քմ) ավտոտնակը 112630 (հարյուր տասներկու հազար վեց հարյուր երեսուն) ՀՀ դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 57.2քմ մակերեսով հողամասը 254080 (երկու հարյուր հիսունչորս հազար ութսուն) ՀՀ դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Մելանյա Հենրիկի Մատինյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Մելանյա Հենրիկի Մատինյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2025 թվականի N 2415

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ: 06-084-0314-0085) ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Եվգենյա Մամիկոնի Աղաջանյանի 23.10.2025 թվականի թիվ 02/15971 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25032024-06-0013 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնք, գյուղ Շահումյանում (ծածկագիր: 06-084-0314-0085) գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, Դիլիջանի խճուղի, 21 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2025 թվականի N 2416

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՄԻՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 9 ՇԵՆՔԻ ԲԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռազմիկ Աշոտի Եսոյանի 06.12.2023թ. թիվ 02/21717 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 25.09.2023թ. թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023LDJ6E3,2025GVXKEQ), 07.10.2025 թվականի «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ Վն 102/25ա եզրակացությունը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ***

1.Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ամիրյան փողոց թիվ 9 շենքի բակում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 27.4քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 25.5քմ) ավտոտնակի և 31.6քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 29.3քմ) տնտեսական շինության դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 31.6քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված

ավտոտնակի, տնտեսական շինության և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը, տնտեսական շինության և հողամասը ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ամիրյան փողոց թիվ 9 շենքի բակում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Ա. Ամիրյան փողոց, 9/1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2025 թվականի N 2417

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ: 06-084-0201-0055) ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տիգրան Ժորիկի Հակոբյանի (ծնված՝ 05.07.1972թ.) կողմից լիազորված անձ՝ Լաուրա Փաշիկի Ասլիկյանի, Սուսաննա Վաղինակի Մովսիսյանի (ծնված՝ 10.01.1945թ.) և Նունե Միխաիլի Թեյմուրազյանի (ծնված՝ 28.02.1968թ.) 13.10.2025թ. թիվ 02/15163 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1991415 վկայականը, 09.10.2025թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 7030 (նոտարական ակտի կոդ: 763-20251009-84-9465555) և թիվ 7029 (նոտարական ակտի կոդ: 763-20251009-84-9465450) լրացուցիչ վկայագրերը, 09.10.2025թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 7033 (նոտարական ակտի կոդ: 763-20250922-84-9414210) վկայագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման /265343/ քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի գյուղ Շահումյանում (ծածկագիր: 06-084-0201-0055) գտնվող, Տիգրան Ժորիկի Հակոբյանին (ծնված՝ 05.07.1972թ.) 1/3, Սուսաննա Վաղինակի Մովսիսյանին (ծնված՝ 10.01.1945թ.) 1/3 և Նունե Միխաիլի Թեյմուրազյանին (ծնված՝ 28.02.1968թ.) 1/3 պատկանող, հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Շահումյան բնակավայր, Դիլիջանի խճուղի, 2-րդ նրբանցք, 10 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

11 նոյեմբերի 2025 թվականի N 2418

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԱՎԱՆ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍ 30 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՆԱՐԻՆԵ ՅՈՒՐԻԿԻ ՄԱԴՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նարինե Յուրիկի Մադոյանի կողմից լիազորված անձ՝ Ռուբեն Վախթանգի Դավթյանի 29.10.2025 թվականի թիվ 02/16277 դիմումը, 15.07.2024 թվականին տրված թիվ 4546 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ:594-20240715-90-8130856), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23062025-06-0021 վկայականը, 20.06.2023 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ ՎՆ 1- 176/23 ի եզրակացությունը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, 01.06.2023 թվականին ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023F2YCYZ), ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով, 18-րդ կետի ա) ենթակետով՝ *որոշում եմ.*

1.Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Բուլղարական ավան 1-ին թաղամաս 30 հասցեում գտնվող, Նարինե Յուրիկի Մադոյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 23.40քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինությունները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2.Նարինե Յուրիկի Մադոյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 23.40քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինությունների համար՝ 46080(քառասունվեց հազար ութսուն ) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 նոյեմբերի 2025 թվականի N 2419

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4, ՄԻՆ. ԷՆԵՐԳՈ. ԹԻՎ 1 ՇԵՆՔԻ ԹԻՎ 1 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԱԼԵՐԻԿ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, ՋՈՒԼԻԵՏՏԱ ԳՐԻԳՈՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՄԵՆ ՎԱԼԵՐԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վալերիկ Արշալույսի Գրիգորյանի (1952թ.) դիմումը, ղեկավարվելով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 1997թ. մարտի 14-ի թիվ 51 որոշմամբ, Վանաձոր համայնքի ավագանու 2001թ. մարտի 23-ի թիվ 21 և 2005թ. օգոստոսի 26-ի թիվ 212 որոշումներով՝ որոշում եմ.

1.Հանձնարարել Քաջիկ Թադևոսյանին՝ (անձնագիր՝ AT0695328, տրված՝ 018-ի կողմից 12/03/2021թ.-ին, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ Փ., 37Շ. 28ԲՆ.) դիմելու ՀՀ կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Վանաձոր քաղաքի Տարոն-4, Մին. Էներգո. թիվ 1 շենքի թիվ 1՝ երեք սենյականոց բնակարանի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

2. Վանաձոր քաղաքի Տարոն-4, Մին. Էներգո. թիվ 1 շենքի թիվ 1՝ երեք սենյականոց բնակարանը 43 000 դրամով ուղղակի վաճառքի ձևով որպես սեփականություն՝ օտարել նշված բնակարանի վարձակալներ՝ Վալերիկ Արշալույսի Գրիգորյանին, Ջուլիետտա Գրիգորի Գրիգորյանին և Արմեն Վալերիկի Գրիգորյանին:

3.Վանաձոր քաղաքի Տարոն-4, Մին. Էներգո. թիվ 1 շենքի կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի համապատասխան չափաբաժնի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է անհատույց փոխանցման շենքի թիվ 1 բնակարանի վարձակալներ՝ Վալերիկ Արշալույսի Գրիգորյանին, Ջուլիետտա Գրիգորի Գրիգորյանին և Արմեն Վալերիկի Գրիգորյանին:

4.Քաջիկ Թադևոսյանին՝ (անձնագիր՝ AT0695328, տրված՝ 018-ի կողմից 12/03/2021թ.-ին, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ Փ., 37Շ. 28ԲՆ.)՝ Վալերիկ Արշալույսի Գրիգորյանի, Ջուլիետտա Գրիգորի Գրիգորյանի և Արմեն Վալերիկի Գրիգորյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել բնակարանի առուվաճառքի և հողամասի անհատույց փոխանցման պայմանագիր, որպես նրանց ընդհանուր բաժնային սեփականություն՝ հավասար բաժիններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 նոյեմբերի 2025 թվականի N 2420

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՁՈՐՅԱՆ ՓՈՂՈՑ 21-11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ՆՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՓՈԽԵԼՈՒ, ՆՈՐ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հրաչիկ Հակոբի Կոստանյանի 15.10.2025 թվականի թիվ 02/15417 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19112015-06-0026 վկայականը, 13.11.2015 թվականին տրված հողատարածքի վարձակալության թիվ 8131 պայմանագիրը, 10 նոյեմբերի 2015 Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի թիվ 1763-Ա որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 14.05.2015թ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 14.05.2015թ. թիվ 588-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Ձորյան փողոց 21-11 հասցեում գտնվող 20.0քմ մակերեսով ավտոտնակի և սպասարկման համար անհրաժեշտ 0.0020հա մակերեսով հողատարածքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգել 10 տարի ժամկետով:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Հրաչիկ Հակոբի Կոստանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի վարձակալության իրավունքի պայմանագիր, ավտոտնակի 1.0քմ-ի համար ամսական վարձավճարի չափ սահմանելով 30 (երեսուն) դրամ, իսկ հողամասի 1.0քմ-ի համար ամսական 24 (քսանչորս) դրամ, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2025 թվականի N 2421

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 03 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2090 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հովսեփ Հովիկի Ունանյանի 10.10.2025 թվականի թիվ 02/15132 դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 03 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 2090 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի 09.10.2025թ. գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-09102025-06-0203 որոշումը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» 35-րդ հոդվածի 24-րդ կետի 1-ին մասով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 03 սեպտեմբերի 2025 թվականի «Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 41 հասցեում գտնվող բնակելի տան նկատմամբ Հմայակ Հովսեփի Ունանյանի, Գայանե Հովհաննեսի Ունանյանի և Նելլի Հովհաննեսի Ունանյանի սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 2090 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Վանաձոր համայնքի ղեկավարի 03 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 2090 որոշման հավելվածը փոխարինել համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հավելվածով:

2.Որոշման նախաբանում «299.7» թվերը փոխարինել «299.6» թվերով և «649.7» թվերը փոխարինել «649.6» թվերով:

3. Որոշման 1-ին կետում «299.7» թվերը փոխարինել «299.6» թվերով:

4. Որոշման 2-րդ կետում «649.7» թվերը փոխարինել «649.6» թվերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2025 թվականի N 2422

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԶԱՔԱՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 31 (Զ. ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ 2-2) ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ՎԱՆԱՁՈՐ ԱՍԱՐ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՎԱՆԱՁՈՐ ԱՍԱՐ» առողջարան ՍՊԸ-ի տնօրեն՝ Ժասմեն Ամիրյանի 15.09.2025 թվականի թիվ 02/13348 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1233797 վկայականը, 12.09.2025 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2025CAV4A3, 2025XMJZAC), «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը և եզրակացությունը, 26.02.2021 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ թիվ ՍՏ-26022021-06-1038 տեղեկանքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ որոշում եմ.

1.Տարանջատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Զաքարյան փողոց թիվ 31 (Զ. Անդրանիկի փողոց թիվ 2-2) հասցեում գտնվող «ՎԱՆԱՁՈՐ ԱՍԱՐ» առողջարան ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները՝ համաձայն «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

2.Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Զաքարյան փողոց թիվ 31 (Զ. Անդրանիկի փողոց թիվ 2-2) հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա. 4.87826հա մակերեսով հողամասին և նրա վրա գտնվող 4112.35քմ մակերեսով շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Զորավար Անդրանիկի փողոց, 2/2 շինություն:

Հողամասում առկա է 52.9քմ արտաքին մակերեսով կառույց, որը չի ընդգրկվում հողամասի մակերեսում:

ք. 2.44899հա մակերեսով հողամասին և նրա վրա գտնվող 2565.7քմ մակերեսով շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Հ. Զաքարյան փողոց, 35 շինություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2025 թվականի N 2423

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 03 ՄԱՐՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 597 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմքը ընդունելով 03 մարտի 2025 թվականի թիվ 597 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 03 մարտի 2025 թվականի «Վանաձոր համայնքի գյուղ Շահումյանի սեփականություն հանդիսացող խոտհարքի վարձակալության 28.06.2021 թվականի պայմանագիրը լուծելու մասին» թիվ 597 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Որոշնան նախաբանում «Արմենի» բառը փոխարինել «Արսենի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2025 թվականի N 2424

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 28 ՀՈՒԼԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1781 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լյովա Ստեփանի Թորոսյանի լիազորված անձ `Էմմա Խաչատուրի Չիլինգարյանի 23.09.2025թ. թիվ 02/13856 դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 28 հուլիսի 2025 թվականի թիվ 1781 որոշումը, 01.07.2024թ. տրված թիվ 77 ԱԴ 7047380 ռուսերենից հայերեն թարգմանված թիվ 4799 (նոտարական ակտի կոդ: 843-20240905-64-8307334) լիազորագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 19/09/2025 թվականին տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը դադարեցնելու մասին թիվ Կ-19092025-06-0125 որոշումը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 28 հուլիսի 2025 «Վանաձոր քաղաքի Տպագրիչների փողոց փակուղի թիվ 7 հասցեի բնակելի տանը կից հողամասի նկատմամբ Լյովա Ստեփանի Թորոսյանի և Յուրիկ Ստեփանի Թորոսյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը ճանաչելու, հողամասի ճշտված սահմանները հաստատելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1781 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1. Որոշման նախաբանը «Յուրիկ Ստեփանի Թորոսյանի» բառերից հետո լրացնել «ծնված՝ 08 դեկտեմբերի 1948 թվականին» բառերով:

2.Որոշման նախաբանը «Լյովա Ստեփանի Թորոսյանի» բառերից հետո լրացնել «ծնված՝ 02 հունվարի 1945 թվականին» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՌԱ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ ВАНАДЗОР
RA LORI REGION VANADZOR MUNICIPALITY
06967534

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2025 թվականի N 2425

### «ՅԱՆՍ ՀՈԼԴԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքի առկայությունը՝ որոշում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվի րատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմանները չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| | համարը | անվանումը | գնման գինը/ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ՀՀ ԼՄՎՀ ԷԱՃԾՁԲ-25/78 | 1 | <<Վանաձորի օր>> համաքաղաքային տոնակատարության կազմակերպան ծառայության ձեռքբերում | 21195000 | «Յանս Հոլդինգ» ՍՊԸ | 01364869 | ՀՀ., Երևան, Ա. Բաբաջանյան 72 | 30.10..2025թ. | «Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ | <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետ | «ՀՀ ԼՄՎՀ ԷԱՃԾՁԲ-25/78» ծածկագրով գնման ընթացակարգին առնչվող փաստաթղթերը հրապարակված են gnumner.minfin.am գնումների պաշտոնական տեղեկագրում |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ նոյեմբերի 11
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2426

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 26/1-2 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՍՏԻՃԱՆԱՀԱՐԹԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՍՏԻՃԱՆԱՀԱՐԹԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանիկ Պարգևի Մխիթարյանի 25.05.2022թ. թիվ 02/4581 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի 13.03.2022թ. հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2022WOLJEH), 26.03.2024թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ ՎՆ 1-127/24 Ի տեխնիկական վիճակի մասին եզրակացությունը և Վանաձոր համայնքի ավագանու 26.04.2023 թվականի թիվ 33 (կետ՝ 2) որոշումը ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 26/1-2 հասցեին կից ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 7.77քմ մակերեսով աստիճանահարթակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 7.77քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Փոխել 0.000777հա հողամասի գործառնական նշանակությունը այլ հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

3.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված հասարակական գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված աստիճանահարթակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին աստիճանահարթակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

6.Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 26/1-2 հասցեին կից գտնվող աստիճանահարթակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Գ. Նարեկացու փողոց, 26/2 Աստիճանահարթակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2427

### ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ՆԱՆԱՐ ԿԱՐԵՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՀԱՄԱՐ ՁԵՌՔ ԲԵՐՎԵԼԻՔ ԳՈՒՅՔԸ ԳՐԱՎ ԴՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 01-Ի ԹԻՎ 2196 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էլմիրա Աբրահամյանի դիմումն իր անգործունակ աղջկա՝ Նանար Աբրահամյանի համար ձեռք բերվելիք գույքը գրավ դնելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 17-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 22, կետ 6), նաև «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից 2025 թվականի նոյեմբերի 06-ին տրված տեղեկանքը՝համաձայն որի «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից 2025 թվականի նոյեմբերի 05-ին հաստատվել է ՀՀ ք. Վանաձոր, Համբարձումյան փողոց, 12 շենք, 40 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի ձեռքբերման նպատակով հիփոթեքային վարկ՝ Միասնական սոցիալական ծառայության կողմից 2025 թվականի մայիսի 06-ին տրամադրված թիվ 01210 հավաստագրի հիման վրա, նաև հաշվի առնելով, որ անգործունակ Նանար Կարենի Աբրահամյանը հանդիսանում է նշյալ հավաստագրի շրջանակներում շահառու և նշված ձեռք բերվելիք գույքի համասեփականատեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Նաիրի փողոցի թիվ 5 տան բնակիչ Էլմիրա Աբրահամյանին (ծնված՝ 20.05.1960թ., անձնագիր՝ AX 056984, տրված՝ 17.03.2025թ., 099-ի կողմից), թույլատրել գրավ դնել իր անգործունակ աղջկա՝ Նանար Կարենի Աբրահամյանի (ծնված՝ 11.06.1983թ., անձնագիր՝ AX 0582322, տրված՝ 25.12.2024թ., 099-ի կողմից) համար ձեռք բերվելիք Վանաձոր քաղաքի Համբարձումյան փողոցի թիվ 12 շենքի թիվ 40 բնակարանի բաժնեմասը:
2. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 01-ի «Անգործունակ Նանար Կարենի Աբրահամյանին պատկանող գույքը գրավ դնելու մասին» թիվ 2196 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ նոյեմբերի 12
ք.Վանաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2428

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 2290 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 34-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 20-ի «Նարինե Սեյրանյանին իր անգործունակ քրոջ՝ Մարինե Լիպարիտի Սեյրանյանի նկատմամբ խնամակալի պարտականությունների կատարումից ազատելու և Վանաձորի քաղաքապետի 2002 թվականի մարտի 20-ի թիվ 182 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 2290 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը. որոշման նախաբանում «Ասլանյանի» բառը փոխարինել «Սեյրանյանի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ նոյեմբերի 12
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2429

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍԱՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՓՈՂՈՑ 8/12-1 ԵՎ ՍԱՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՓՈՂՈՑ 8/12-2 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԱՄ ՄԵԼՍԻԿԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արամ Մելսիկի Միքայելյանի 24.10.2025 թվականի թիվ 02/16014 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18092025-06-0010 և թիվ 18092025-06-0031 վկայականները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /265402/, ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 4.6 մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^{3}$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով՝ **որոշում եմ.**

1.Փոխել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Սանկտ-Պետերբուրգի փողոց 8/12-2 հասցեում գտնվող 0.05691հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2.Միավորել Վանաձոր համանք Վանաձոր քաղաքի Սանկտ-Պետերբուրգի փողոց 8/12-1 և Սանկտ-Պետերբուրգի փողոց 8/12-2 հասցեներում գտնվող Արամ Մելսիկի Միքայելյանին սեփականության իրավունքով պատկանող 0.06691հա ընդհանուր մակերեսով հողամասերը՝ համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18092025-06-0010 և թիվ 18092025-06-0031 վկայականների:

3.Սույն որոշման 2-րդ կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Սանկտ-Պետերբուրգի փողոց 8/13 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2430

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2274 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարատ Միքայելի Մկրտչյանի, Սամվել Միքայելի Մկրտչյանի 03.10.2025 թվականի թիվ 14662 դիմումը,անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը , ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 16 հոկտեմբերի 2025 թվականի «Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Ազատամարտիկների փողոց 17/1 հասցեում գտնվող բնակելի տանը նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 2274 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման հիմքում «Արարատ» անվանումը փոխարինել «Մարատ» անվամբ:

2.Որոշման բովանդակության մեջ « Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Ազատամարտիկների փողոց 17/2 բնակելի տուն» հասցեն փոխարինել « Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Ազատամարտիկների փողոց, 3-րդ նրբանցք, 9/4 բնասկելի տուն» հասցեով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2431

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 31 ՀՈՒԼԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1810 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գերասիմ Վիկտորի Ավետիսյանի 27.08.2025 թվականի թիվ 12237 դիմումը, 26.08.2025 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին Կ-26082025-06-0038 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 31 հուլիսի 2025 թվականի «Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 10/6 հասցեում գտնվող, վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված ավտոտնակը եվ դրանով զբաղեցված հողամասը Գերասիմ Վիկտորի Ավետիսյանին օտարելու մասին» թիվ 1810 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1.Որոշման 1-ն կետում «50810 (հիսուն հազար ութ հարյուր տաս)» և «114600 (հարյուր տասնչորս հազար վեց հարյուր)» թվերը

փոխարինել համապատասխանաբար «59760 (հիսունինը հազար յոթ հարյուր վաթսուն)» և «176330 (հարյուր յոթանասունվեց հազար երեք հարյուր երեսուն)» թվերով:

2. Գերասիմ Վիկտորի Ավետիսյանին՝ մեկ ամսվա ընթացքում վճարել ավտոտնակի և հողամասի օտարման համար սահմանված վճարների 8950(ութ հազար ինը հարյուր հիսուն) և 61730 (վաթսունմեկ հազար յոթ հարյուր երեսուն) դրամ տարբերությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2432

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔ 3 ՇԵՆՔ 28 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Իրինա Վովայի Աբրահամյանի, Սուրեն Մանվելի Առաքելյանի, Աստղիկ Մանվելի Առաքելյանի, Վիոլետա Վովայի Աբրահամյանի 20.10.2025 թվականի թիվ 02/15686 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 12122024-06-0055 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, 3 շենք 28 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե, Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, 1-ին փողոց, 3 շենք, 28 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2433

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Մ. ՀԵՐԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 33 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ,ԳԱՐԻԿ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ, ԱԼԵՔՍԱՆ ԳԱՌՆԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԵՎ ԼԻԼԻՅԱ ԳԱՌՆԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գագիկ Ալեքսանդրի Պողոսյանի (ծնված՝ 04.08.1970թ.) ով հանդիսանում է նաև Գարիկ Ալեքսանդրի Պողոսյանի (ծնված՝ 15.08.1972թ.) լիազորված անձը, Ալեքսան Գառնիկի Պողոսյանի (ծնված՝ 08.05.1992թ.) և Լիլիյա Գառնիկի Պողոսյանի (ծնված՝ 28.05.1989թ.) լիազորված անձ՝ Գոհար Արամայիսի Պետրոսյանի 28.08.2025 թվականի թիվ 02/12347 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 31.01.2025 թվականի թիվ 1192 լիազորագիրը (նոտարական ակտի կոդը: 741-20250310-67-8820735), 26.05.2025 թվականի թիվ 2635 լիազորագիրը (նոտարական ակտի կոդը: 741-20250526-90-9034250), 03.07.2025 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3597 վկայագիրը (նոտարական ակտի կոդը: 741-20250628-84-9139063), 03.07.2025 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3598 վկայագիրը (նոտարական ակտի կոդը: 741-20250628-84-9139064), 03.07.2025 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3599 վկայագիրը (նոտարական ակտի կոդը: 741-20250628-84-9139060), 03.07.2025 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3600 վկայագիրը (նոտարական ակտի կոդը: 741-20250628-84-9139061), 11.04.2014 թվականի ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 1852 վկայագիրը, 18.03.1986 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, 21.03.1986 թվականի անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 16.09.2025 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-223/25 ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Մ. Հերացու փողոց թիվ 33 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 919.16քմ մակերեսով հողամասը և դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1955-1995թ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 919.16քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Գագիկ Ալեքսանդրի Պողոսյանի (1/3), Գարիկ Ալեքսանդրի Պողոսյանի (1/3), Ալեքսան Գառնիկի Պողոսյանի (1/6) և Լիլիյա Գառնիկի Պողոսյանի (1/6) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Մ. Հերացու փողոց թիվ 33 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 919.16քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 706.02քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Մ. Հերացու փողոց, 33 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2434

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Մ. ՀԵՐԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 12 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՇԽԵՆ ԳԵՆԱԴԻԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ 02 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԻՎ 1728-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼ

Հիմք ընդունելով Աշխեն Գենադիի Հարությունյանի (ծնված՝ 29.10.1963թ.) 02.10.2024 թվականի թիվ 02/16630 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 21.08.2023 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 7269 վկայագիրը (նոտարական ակտի կոդը: 763-20230821-84-7219122), 20.02.2004 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1402 վկայագիրը, 18.07.2025 թվականի թիվ 4781 հայտարարությունը (նոտարական ակտի կոդը: 763-20250718-66-9204798), 18.07.2025 թվականի թիվ 4853 հայտարարությունը (նոտարական ակտի կոդը: 763-20250721-66-9212853), 18.07.2025 թվականի թիվ 4836 հայտարարությունը (նոտարական ակտի կոդը: 763-20250721-66-9211763), 22.07.2025 թվականի թիվ 4880 հայտարարությունը (նոտարական ակտի կոդը: 763-20250722-66-9217371), 27.10.1986 թվականի անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 02 նոյեմբերի 2015 թվականի Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի թիվ 1728-Ա որոշումը, «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և եզրակացությունը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունը, 24.09.2024թ. հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր: 20249RULSP), 09.10.2025 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-236/25 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Մ. Հերացու փողոց թիվ 12 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 313.0քմ և նրան կից 26.537քմ մակերեսով հողամասերը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1930-1990թ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1028.9քմ, որից Համիկ Իսախանյանի (Վարդանանց փողոց 112/5 և Վարդանանց փողոց 112/4) բաժնեմասը կազմում է 51/100, Նելլի Պապյանի (Մ. Հերացու փողոց 12/2) բաժնեմասը 17/200, Աշխեն Հարությունյանի (Մ. Հերացու

փողոց 12) բաժնեմասը 33/100, Արամ և Հայկ Նազինյանների (Մխ. Հերացու փողոց 12/3) բաժնեմասը 33/100:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Աշխեն Գենադիի Հարությունյանի (ծնված՝ 29.10.1963թ.) սեփականության իրավունքը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Մ. Հերացու փողոց թիվ 12 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 313.0քմ մակերեսով հողամասին կից 26.537քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

0.10289հա ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասից Համիկ Իսախանյանի (Վարդանանց փողոց 112/5 և Վարդանանց փողոց 112/4) բաժնեմասը կազմում է 51/100, Նելլի Պապյանի (Մ. Հերացու փողոց 12/2) բաժնեմասը 17/200, Աշխեն Հարությունյանի (Մ. Հերացու փողոց 12) բաժնեմասը 33/100, Արամ և Հայկ Նազինյանների (Մխ. Հերացու փողոց 12/3) բաժնեմասը 33/100

2. Ճանաչել Աշխեն Գենադիի Հարությունյանի (ծնված՝ 29.10.1963թ.) սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Մ. Հերացու փողոց թիվ 12 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 339.537քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ համաձայն «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

3. Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Մ. Հերացու փողոց թիվ 12 հասցեում գտնվող 0.10289հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի: Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Մ. Հերացու փողոց, 12/1 բնակելի տուն:

5. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 02 նոյեմբերի 2015 թվականի «Վանաձոր քաղաքի Մխ. Հերացու փողոցի թիվ 12 հասցեի բնակելի տան կից հողամասի և շինությունների նկատմամբ Մարիետա Նազարի Դնոյանի սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1728-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2435

### ՄԱՐԶ ԼՈՌԻ, ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ՀՈՂԱՄԱՍԻ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 06-084-0447-0054) ԳՏՆՎՈՂ «ԷԿՈ ՏՈՒՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԷԿՈ ՏՈՒՐ» ՍՊԸ-ի տնօրեն Նաիրի Մանուկյանի 08.09.2022թ. թիվ 01/10843 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06092022-06-0034 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**

Վանաձոր համայնքի,գյուղ Շահումյանում /հողամասի ծածկագիր: 06-084-0447-0054/ գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 3 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2436

### ՄԱՐԶ ԼՈՌԻ, ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ՀՈՂԱՄԱՍԻ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 06-084-0448-0062) ԳՏՆՎՈՂ «ԷԿՈ ՏՈՒՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԷԿՈ ՏՈՒՐ» ՍՊԸ-ի տնօրեն Նաիրի Մանուկյանի 29.04.2024թ. թիվ 01/7864 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 11052023-06-0111 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**

Վանաձոր համայնքի,գյուղ Շահումյանում /հողամասի ծածկագիր: 06-084-0448-0062/ գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 5 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2437

### ՄԱՐԶ ԼՈՌԻ, ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ՀՈՂԱՄԱՍԻ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 06-084-0447-0053) ԳՏՆՎՈՂ «ԷԿՈ ՏՈՒՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԷԿՈ ՏՈՒՐ» ՍՊԸ-ի տնօրեն Նաիրի Մանուկյանի 08.09.2022թ. թիվ 01/10840 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25082022-06-0112 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**

Վանաձոր համայնքի,գյուղ Շահումյանում /հողամասի ծածկագիր: 06-084-0447-0053/ գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 4 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2438

## ՄԱՐԶ ԼՈՌԻ, ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ՀՈՂԱՄԱՍԻ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 06-084-0309-0086) ԳՏՆՎՈՂ «ԷԿՈ ՏՈՒՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԷԿՈ ՏՈՒՐ» ՍՊԸ-ի տնօրեն Նաիրի Մանուկյանի 08.09.2022թ. թիվ 01/10842 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25082022-06-0102 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**

Վանաձոր համայնքի,գյուղ Շահումյանում /հողամասի ծածկագիր: 06-084-0309-0086/ գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, Դիլիջանի խճուղի, 1-ին փակուղի, 12 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2439

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1881 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 06 օգոստոսի 2025 թվականի 1881 որոշումը և հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 06 օգոստոսի 2025 թվականի «Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 43/6գ հասցեում գտնվող հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1881 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1.Որոշման 3-րդ կետում «Գ. Նարեկացու փողոց, 43/2 հողամաս» բառերը փոխարինել «Գ. Նարեկացու փողոց, 43/5 հողամաս » բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ նոյեմբերի 12
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2440

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 30 ՀՈՒԼԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1796 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռազմիկ Սամսոնի Հովհաննիսյանի լիազորված անձ Աշոտ Ռազմիկի Հովհաննիսյանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 30 հուլիսի 2025 թվականի թիվ 1796 որոշումը, 12 օգոստոսի 2025թ. լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 843-20250812-90-9285344), ՀՀ կադաստրի կոմիտեի 10.09.2025թ. գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցման մասին թիվ Կ-10092025-06-0135 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» 35-րդ հոդվածի 24-րդ կետի 1-ին մասով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 30 հուլիսի 2025 թվականի «Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Աբեղյան փողոց թիվ 58 հասցեի բնակելի տանը կից հողամասի և դրա վրա գտնվող շինությունների նկատմամբ Ռազմիկ Սամսոնի Հովհաննիսյանի սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1796 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1.Որոշման 1-ին կետում «0.04444հա մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն երեք տնատիրությունների միջև» բառերը փոխարինել « 0.04444հա մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն երեք տնատիրությունների միջև՝ Սուրեն Սամսոնի Հովհաննիսյանի(Աբեղյան փողոց թիվ 58 պայմանական հասցե), Սերգեյ Սեդրակի Հովհաննիսյանի(Աբեղյան փողոց թիվ 58 պայմանական հասցե), Ռազմիկ Սամսոնի Հովհաննիսյանի(Ա. Ավետիսյան փողոց, 58) միջև հավասար բաժիններով՝ յուրաքանչյուրինը 1/3 մասով/:» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2441

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՌՈՒՍԹԱՎԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3 ՇԵՆՔԻ ԵՎ ՌՈՒՍԹԱՎԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3 ՇԵՆՔԻ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆՈՒՅՆ ՇԵՆՔԻ ԹԻՎ 25 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ԱՆՈՒՇ ԺՈՐԱՅԻ ՈՍԿԱՆՅԱՆԻ ԲԱԺԻՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ,ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՓՈԽԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 02 ՕԳՈՍՏՈՍԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1828 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անուշ Ժորայի Ոսկանյանի 02.10.2025 թվականի թիվ 02/14590 դիմումը, 26.04.2024 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 2821 վկայագիրը (նոտարական ակտի կոդ:763-20240426-84-7895790, «Գսպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրված հատակագծերը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1982155 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698 որոշումով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշումով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով ՝ ***որոշում եմ.***

1. Փոխել Վանաձոր քաղաքի Ռուսթավի փողոցի թիվ 3 շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող 0.01410հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի

2.Փոխել Վանաձոր քաղաքի Ռուսթավի փողոցի թիվ 3 շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող 0.29158 հա ընդհանուր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի իսկ 53 քմ մակերեսով շինության նպատակը մանկապարտեզից՝ բնակարանի:

3.Հաստատել Վանաձոր քաղաքի Ռուսթավի փողոցի թիվ 3 շենքի ընդհանուր բաժնային սեփականության մեջ նույն շենքի թիվ 16 բնակարանի սեփականատեր Անուշ Ժորայի Ոսկանյանի բաժին հանդիսացող 0.01410հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն թիվ 2 հատակագծի:

4.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, ք. Վանաձոր, Ռուսթավիի փողոց, 3/16 հողամաս:

5.Սույն որոշման 2-րդ կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, ք. Վանաձոր, ք. Ռուսթավիի փողոց, 3 շենք, 16 բնակարան

6. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 02 օգոստոսի 2024 թվականի «Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի «Բազում Դ թաղ. Ռուսթավի փող. թիվ 3 շենք թիվ 16 հասցեում գտնվող հողամասի ճշտված սահմանները հաստատելու, շինության և դրանով զբաղեցված հողամասի գործառնական նշանակությունը փոխելու մասին» թիվ 1828 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2442

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 99 ՇԵՆՔԻ ԹԻՎ 34 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱԼԻՆԱ ՍՈՒՐԵՆԻ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալինա Սուրենի Ղահրամանյանի (1963թ.) լիազորված անձ՝ Կորյուն Հմայակի Մանուկյանի դիմումը, ղեկավարվելով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 1997թ. մարտի 14-ի թիվ 51 որոշմամբ, Վանաձոր համայնքի ավագանու 2001թ. մարտի 23-ի թիվ 21 և 2005թ. օգոստոսի 26-ի թիվ 212 որոշումներով՝ որոշում եմ.

1.Հանձնարարել Քաջիկ Թադևոսյանին՝ (անձնագիր՝ AT0695328, տրված՝ 018-ի կողմից 12/03/2021թ.-ին, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ Փ., 37Շ. 28ԲՆ.) դիմելու ՀՀ կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Վանաձոր քաղաքի Աղայան փողոցի թիվ 99 շենքի թիվ 34 երեք սենյականոց բնակարանի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

2.Վանաձոր քաղաքի Աղայան փողոցի թիվ 99 շենքի թիվ 34 երեք սենյականոց բնակարանը 38 000 դրամով ուղղակի վաճառքի ձևով որպես սեփականություն՝ օտարել նշված բնակարանի վարձակալ՝ Ալինա Սուրենի Ղահրամանյանին:

3.Վանաձոր քաղաքի Աղայան փողոցի թիվ 99 շենքի կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի համապատասխան չափաբաժնի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է անհատույց փոխանցման շենքի թիվ 34 բնակարանի վարձակալ՝ Ալինա Սուրենի Ղահրամանյանին:

4.Քաջիկ Թադևոսյանին՝ (անձնագիր՝ AT0695328, տրված՝ 018-ի կողմից 12/03/2021թ.-ին, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ Փ., 37Շ. 28ԲՆ.) Ալինա Սուրենի Ղահրամանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել բնակարանի առուվաճառքի և հողամասի անհատույց փոխանցման պայմանագիր՝ որպես սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2443

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ ԹԻՎ 147 ՇԵՆՔԻ ԹԻՎ 28 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՍԵԴԱ ՍՈՒՐԵՆԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ, ԱՐՏԱԿ ՀՐԱՉՅԱՅԻ ԱՅԴԻՆՅԱՆԻՆ, ՄԱՐԻՆԱ ԼԵՐՆԻԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ, ՄԱՐԻԱՄ ԱՐՏԱԿԻ ԱՅԴԻՆՅԱՆԻՆ ԵՎ ՀՐԱՉՅԱ ԱՐՏԱԿԻ ԱՅԴԻՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սեդա Սուրենի Պողոսյանի (1959թ.) դիմումը, ղեկավարվելով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 1997թ. մարտի 14-ի թիվ 51 որոշմամբ, Վանաձոր համայնքի ավագանու 2001թ. մարտի 23-ի թիվ 21 և 2005թ. օգոստոսի 26-ի թիվ 212 որոշումներով՝ որոշում եմ.

1.Հանձնարարել Քաջիկ Թադևոսյանին՝ (անձնագիր՝ AT0695328, տրված՝ 018-ի կողմից 12/03/2021թ.-ին, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ Փ., 37Շ. 28ԲՆ.) դիմելու ՀՀ կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղու թիվ 147 շենքի թիվ 28՝ չորս սենյականոց բնակարանի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

2.Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղու թիվ 147 շենքի թիվ 28՝ չորս սենյականոց բնակարանը 44 000 դրամով ուղղակի վաճառքի ձևով որպես սեփականություն՝ օտարել նշված բնակարանի վարձակալներ՝ Սեդա Սուրենի Պողոսյանին, Արտակ Հրաչյայի Այդինյանին, Մարինա Լերնիկի Մարտիրոսյանին, Մարիամ Արտակի Այդինյանին և Հրաչյա Արտակի Այդինյանին:

3.Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղու թիվ 147 շենքի կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի համապատասխան չափաբաժնի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է անհատույց փոխանցման շենքի թիվ 28 բնակարանի վարձակալներ՝ Սեդա Սուրենի Պողոսյանին, Արտակ Հրաչյայի Այդինյանին, Մարինա Լերնիկի Մարտիրոսյանին, Մարիամ Արտակի Այդինյանին և Հրաչյա Արտակի Այդինյանին:

4.Քաջիկ Թադևոսյանին՝ (անձնագիր՝ AT0695328, տրված՝ 018-ի կողմից 12/03/2021թ.-ին, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ Փ., 37Շ. 28ԲՆ.)՝ Սեդա Սուրենի Պողոսյանի, Արտակ Հրաչյայի Այդինյանի, Մարինա Լերնիկի Մարտիրոսյանի, Մարիամ Արտակի Այդինյանի և Հրաչյա Արտակի Այդինյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել բնակարանի առուվաճառքի և հողամասի անհատույց փոխանցման պայմանագիր՝ որպես նրանց ընդհանուր բաժնային սեփականություն՝ հավասար բաժիններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2444

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 18 ՇԵՆՔԻ ԹԻՎ 33 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԱՀԱՆ ԱՐՄԵՆԻ ԴԱՎՈՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՄԵՆ ՓԱՅԼԱԿԻ ԴԱՎՈՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վահան Արմենի Դավոյանի (1990թ.) դիմումը, ղեկավարվելով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 1997թ. մարտի 14-ի թիվ 51 որոշմամբ, Վանաձոր համայնքի ավագանու 2001թ. մարտի 23-ի թիվ 21 և 2005թ. օգոստոսի 26-ի թիվ 212 որոշումներով՝ որոշում եմ.

1.Հանձնարարել Քաջիկ Թադևոսյանին՝ (անձնագիր՝ AT0695328, տրված՝ 018-ի կողմից 12/03/2021թ.-ին, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, Գ.Ր. ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ Փ., 37Շ. 28ԲՆ.) դիմելու ՀՀ կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Վանաձոր քաղաքի Համբարձումյան փողոցի թիվ 18 շենքի թիվ 33՝ երկու սենյականոց բնակարանի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

2.Վանաձոր քաղաքի Համբարձումյան փողոցի թիվ 18 շենքի թիվ 33՝ երկու սենյականոց բնակարանը 31 000 դրամով ուղղակի վաճառքի ձևով որպես սեփականություն՝ օտարել նշված բնակարանի վարձակալներ՝ Վահան Արմենի Դավոյանին և Արմեն Փայլակի Դավոյանին:

3.Վանաձոր քաղաքի Համբարձումյան փողոցի թիվ 18 շենքի կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի համապատասխան չափաբաժնի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է անհատույց փոխանցման շենքի թիվ 33 բնակարանի վարձակալներ՝ Վահան Արմենի Դավոյանին և Արմեն Փայլակի Դավոյանին:

4.Քաջիկ Թադևոսյանին՝ (անձնագիր՝ AT0695328, տրված՝ 018-ի կողմից 12/03/2021թ.-ին, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, Գ.Ր. ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ Փ., 37Շ. 28ԲՆ.)՝ Վահան Արմենի Դավոյանի և Արմեն Փայլակի Դավոյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել բնակարանի առուվաճառքի և հողամասի անհատույց փոխանցման պայմանագիր՝ որպես նրանց ընդհանուր բաժնային սեփականություն՝ հավասար բաժիններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2445

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2258 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռազմիկ Ջիվանի Խաչատրյանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 16 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2258 որոշում, 29/10/2025 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-29102025-06-0121 որոշումը, «ԻՆԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի նոր հատակագիծը, մասնագիտական եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 16 հոկտեմբերի 2025 թվականի «Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Նար-Դոսի փողոց թիվ 25 հասցեի բնակելի տանը կից հողամասի և շինությունների նկատմամբ Ռազմիկ Ջիվանի Խաչատրյանի և Ռաֆիկ Ջիվանի Խաչատրյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 2258 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. 16 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2258 համայնքի ղեկավարի որոշման հավելվածը փոխարինել համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հավելվածով:

2. Որոշման նախաբանում և 1-ին կետերում «387.0քմ » բառերը փոխարինել «384.65քմ» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2446

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՌՈՒՍԹԱՎԻԻ ՓՈՂՈՑ 3-20 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Սեյրանի Վերմիշյանի 30.10.2025 թվականի թիվ 02/16316 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04092025-06-0011 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշումով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով՝ ***որոշում եմ.***

1. Փոխել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ռուսթավիի փողոց 3-20 հասցեում գտնվող 0.01414հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի, իսկ շինության օգտագործման նպատակը փոխել տնտեսական սենյակ, մառանից ՝ խանութի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ նոյեմբերի 12
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2447

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Տ. ՉՈՒԽԱՋՅԱՆ ՓՈՂՈՑ 36/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐԹՈՒՐ ՌԱԶՄԻԿԻ ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Ռազմիկի Դալլաքյանի 11.01.2024թվականի թիվ 02/621 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12082025-06-0067 վկայականը, 13.05.2024թ.. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տ. Չուխաջյան փողոց, 36/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 19.0քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 18.72քմ) ավտոտնակը 37420 (երեսունյոթ հազար չորս հարյուր քսան) ՀՀ դրամ և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 21.0քմ մակերեսով հողամասը 93280 (իննսուներեք հազար երկու հարյուր ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արթուր Ռազմիկի Դալլաքյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Արթուր Ռազմիկի Դալլաքյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am


## Ո Ր Ո Շ Ու Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2448

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱԹՈՒՄԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 17 ՇԵՆՔԻ ԲԱԿՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ազատ Արամայիսի Հակոբջանյանի 26.12.2023 թվականի թիվ 02/23183 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը,հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Արսեն Իսահակյան Ռուդիկ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը,25.12.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր 2023A4ERDE), 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Բաթումի փողոց թիվ 17 շենքի բակում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 21.00քմ ընդհանուր մակերեսով ավտոտնակի և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 21.00քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի, և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը, հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Բաթումի փողոց թիվ 17 շենքի բակում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Բաթումիի փողոց, 17/20 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2449

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 20 ՇԵՆՔԻ ԲԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արևիկ Գագիկի Խաչատրյանի 21.12.2023թ. թիվ 02/22860 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 16.12.2023թ. թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 20233SGPHD), 08.10.2025 թվականի «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ Վն 104/25ա եզրակացությունը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոց թիվ 20 շենքի բակում գտնվող ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 28.6քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 24.1քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 28.6քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված

ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոց թիվ 20 շենքի բակում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Մոսկովյան փողոց, 20/5 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 2450

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ 2 ԱՎԱՆ ԹԻՎ 125 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱԳԻԿ ՌՈՒԴՈՒԼՖԻ ՄԵԼԻՔՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գագիկ Ռուդոլֆի Մելիքյանի լիազորված անձ՝ Զորի Նորիկի Բաբայանի 15.11.2024 թվականի թիվ 02/19368 դիմումը, 09.01.2023թ. թիվ 27 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 775-20230109-90-6578854), 13.08.2025 թվականին տրված թիվ 5617 (նոտարական ակտի կոդ: 763-20250813-66-9289098), թիվ 5618 (նոտարական ակտի կոդ: 763-20250813-66-9289042) և թիվ 5619 (նոտարական ակտի կոդ: 763-20250813-66-9289118) հայտարարությունները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /254664/, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, «ԱՐՍԵՆ ԽԱՉԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 04.12.2024թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-368/24Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավան թիվ 125 (պայմանական) հասցեում կառուցած բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 228.7քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1990-1994թթ.-ին և դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 228.7քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1990թ.-ից:

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^{3}$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Գագիկ Ռուդոլֆի Մելիքյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավան թիվ 125 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան

կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 228.7քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2.Փոխել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավան թիվ 125 (պայմանական) հասցեում գտնվող 06-001-1010-0006 կադաստրային ծածկագրով 0.000861 հա մակերեսով և 06-001-1010-0004 կադաստրային ծածկագրով 0.000112 հա մակերեսով հողամասերիի գործառնական նշանակությունը այլ հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4.Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավան թիվ 125 (պայմանական) հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Բուլղարական ավան 2-րդ թաղամաս, 125 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

13 նոյեմբերի 2025 թվականի N 2451

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 5 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տիգրան Վալերիի Ստեփանյանի 03.10.2025թ. թիվ 02/14629 դիմումը, «Արսեն Իսահակյան Ռուդիկ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը,15.09.2025 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-15092025-06-0130 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1855-Ն որոշումով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Շիրակացի փողոց թիվ 5 բազմաբնակարանային շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ 0.062936 հա մակերեսով հողամասի հատակագիծը՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. 0.062936 հա մակերեսով հողամասը համարվում է ընդհանուր բաժնային սեփականություն բազմաբնակարան բնակելի շենքի սեփականատերերի միջև:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ / ВАНАДЗОР МУНИЦИПАЛИТЕТ / VANADZOR MUNICIPALITY / ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ / LORI REGION / ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ / РА / 06967534

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 13
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

13 նոյեմբերի 2025 թվականի N 2452

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 24 ՀՈՒԼԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1728 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 18.08.2025 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը մերժելու մասին թիվ (Կ-18082025-06-0052) որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 24.07.2025 թվականի թիվ 1728 որոշումը, «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված 12.09.2025 թվականի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2025FJ23ZF), ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով ***որոշում եմ.***

Վանաձոր համայքի ղեկավարի 24 հուլիսի 2025 թվականի «Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց թիվ 96 3 շենքի հյուսիսային մասում ինքնակամ կառուցված ավտոտնակի, և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչելու, ավտոտնակը օրինականացնելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1728 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Որոշման 1–ին կետը խմբագրել հետևյալ նոր բովանդակությամբ «1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց թիվ 96 3 շենքի հյուսիսային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 26.7քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ընդհանուր ներքին մակերես 23.3քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 21.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի համաձայն:»

2. 24.07.2025թ. Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 1728 որոշման հավելվածը փոխարինել համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հավելվածով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 13
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 նոյեմբերի 2025 թվականի N 2453

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Գ. ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 10 ԵՎ Գ. ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 12/2 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԼՈՒՍԻՆԵ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՈՓՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լուսինե Սերյոժայի Ոփյանի 19.08.2025 թվականի թիվ 02/11807 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 08042022-06-0022 և 13082025-06-0034 վկայականները, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը և մասնագիտական եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Վանաձոր համանք, Վանաձոր քաղաքի Գ. Լուսավորչի փողոց 1-ին նրբանցք 10 և Գ. Լուսավորչի փողոց 1-ին նրբանցք 12/2 հասցեներում գտնվող Լուսինե Սերյոժայի Ոփյանին սեփականության իրավունքով պատկանող 0.03172հա ընդհանուր մակերեսով հողամասերը՝ համաձայն «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Կ. Դեմիրճյան փողոց, 1-ին նրբանցք, 12 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 13
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 նոյեմբերի 2025 թվականի N 2454

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ 99/11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՄԻՔԱՅԵԼ ՍԱՄՎԵԼԻ ԲԱԲԼԱՆՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Միքայել Սամվելի Բաբլանյանի լիազորված անձ Թերեզա Լյովայի Մելքոնյանի 21.12.2023թ. թիվ 02/22887 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22082025-06-0027 վկայականը, 10.08.2023 թվականին տրված թիվ 7301 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 763-20230821-64-7222663), 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ որոշում եմ.

1.Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 99/11 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 82.7քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ընդհանուր ներքին մակերես՝ 70.7քմ) ավտոտնակ և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 43.3քմ մակերեսով հողամասը 10 տարի ժամկետով, վարձակալության իրավունքով տրամադրել Միքայել Սամվելի Բաբլանյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Միքայել Սամվելի Բաբլանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի վարձակալության իրավունքի պայմանագիր, ավտոտնակի 1.0քմ-ի համար ամսական վարձավճարի չափ սահմանելով 20 (քսան) դրամ, իսկ հողամասի 1.0քմ-ի համար ամսական 18 (տասնութ) դրամ, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 13
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

13 նոյեմբերի 2025 թվականի N 2455

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 03 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2367 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 03.11.2025 թվականի թիվ 2367 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայքի ղեկավարի 03 նոյեմբերի 2025 թվականի « Վանաձոր համայնքի գյուղ Գուգարքում (ծածկագիր: 06-031-0055-0039) գտնվող բնակելի տանը կից հողամասի և դրա վրա գտնվող շինությունների նկատմամբ Թերեզա Ավետյանի սեփականության իրավունքը ճանաչելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 2367 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1.Որոշման 2-րդ կետից հանել «իսկ հողամասում առկա 335.12 քմ մակերեսով շինությունը թողնել ինքնակամ» բառերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 13
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

14 նոյեմբերի 2025 թվականի N 2456

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի ԹԻՎ 4-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ավագանու 07 հունիսի 2016 թվականի թիվ 33-Ն որոշմամբ հաստատված կարգը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ, 37-րդ և 84-րդ հոդվածներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման ծրագրին մասնակցելու մասին», «Վանաձոր համայնքի 2026 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքում տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու և Վանաձոր համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 5-ի թիվ 4-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագծերի վերաբերյալ կազմակերպել հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ՝ 2025 թվականի նոյեմբերի 14-ից մինչև դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում:

2. Համայնքապետարանի պաշտոնական ինտերնետային կայք էջում տեղադրել հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների հրավեր, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում:

3. Հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների օր նշանակել 2025 թվականի դեկտեմբերի 1-ը:

4. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների վարման համար համայնքի ղեկավարի ներկայացուցիչ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Վահե Գրիգորյանին:

5"«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման ծրագրին մասնակցելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների վարման համար համայնքի ղեկավարի պաշտոնակատարի ներկայացուցիչ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լիլյա Դավթյանին:

6. «Վանաձոր համայնքի 2026 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին» Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների վարման համար համայնքի ղեկավարի ներկայացուցիչ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի առևտրի սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Արման Մովսիսյանին:

7. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքում տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու և Վանաձոր համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 5-ի թիվ 4-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների վարման համար համայնքի ղեկավարի ներկայացուցիչ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և տուրիզմի հարցերի բաժնի պետ Քրիստինե Մադոյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 14
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2025 թվականի N 2457

### «ՀԱԿՈԲ ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ԵՆԹԱՐԿԵԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ

**1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի սպասարկման և տրանսպորտի բաժնի կողմից կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2.Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի սպասարկման և տրանսպորտի բաժնի կողմից 20.10.2025 թվականի կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ «Հակոբ Մկրտչյան Արմենի» անհատ ձեռնարկատիրոջ գործող օբյեկտում (ՀՎՀՀ՝ 67175354, հաշվառման հասցե՝ ք. Վանաձոր, Խնձորուտ 2 փողոց, 2 նրբ. տնակ 6, գործունեության հասցե՝ ք. Վանաձոր, Կ. Դեմիրճյան փողոց 1 շ. 22) բացակայում է համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի 2025 թվականի երրորդ եռամսյակի համար համապատասխան թույլտվությունը:

Հարուցված վարչական վարույթի հիման վրա 2025 թվականի նոյեմբերի 03-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին «Հակոբ Մկրտչյան Արմենի» անհատ ձեռնարկատերը պատշաճ ծանուցվել, սակայն վարչական վարույթի լսումներին չի ներկայացել (փոստային առաքման հետադարձ կտրոն թիվ AL0130157058AM):

**3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ

հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16.-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առանց թույլտվության ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք իրականացնելը, իսկ հանրային սննդի օբյեկտներում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների իրացում իրականացնելը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 219¹-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 169.16.-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 169.16.-րդ հոդվածի 1-ին մասով, 219¹-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով.

**ՈՐՈՇԵՑԻ**

1. «Հակոբ Մկրտչյան Արմենի» անհատ ձեռնարկատիրոջը ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի

169.16.-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2.Պարտավորեցնել «Հակոբ Մկրտչյան Արմենի» անհատ ձեռնարկատիրոջը տուգանքի գումարը վճարել 900235401537 հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

7.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 14
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

14 նոյեմբերի 2025 թվականի N 2458

## «ԷԴՎԱՐԴ ԳԱԼՍՏՅԱՆ ԿԱՄՈՅԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ԵՆԹԱՐԿԵԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ

**1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի սպասարկման և տրանսպորտի բաժնի կողմից կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2.Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի սպասարկման և տրանսպորտի բաժնի կողմից 20.10.2025 թվականի կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ «Էդվարդ Գալստյան Կամոյի» անհատ ձեռնարկատիրոջ գործող օբյեկտում (ՀՎՀՀ՝ 75498656, գործունեության հասցե՝ ք. Վանաձոր, Մխիթար Գոշի փողոց 4/1) բացակայում է համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի 2025 թվականի երրորդ եռամսյակի համար համապատասխան թույլտվությունը:

Հարուցված վարչական վարույթի հիման վրա 2025 թվականի նոյեմբերի 03-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին «Էդվարդ Գալստյան Կամոյի» անհատ ձեռնարկատերը պատշաճ ծանուցվել, սակայն վարչական վարույթի լսումներին չի ներկայացել (azdarar.am): «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի 15-րդ կետի համաձայն՝ միաժամանակ ծանուցումը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Սույն մասով նախատեսված գործողությունները կատարելուց հետո՝ հինգերորդ օրը, համապատասխան ծանուցումները համարվում են հանձնված (ստացված): Այսպիսով «Էդվարդ Գալստյան Կամոյի» անհատ ձեռնարկատերը վարչական վարույթի լսումներին պատշաճ ծանուցվել է և չի ներկայացել (ՀՀ ինտերնետային ծանուցման պաշտոնական կայք «azdarar»):

**3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16.-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առանց թույլտվության ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք իրականացնելը, իսկ հանրային սննդի օբյեկտներում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների իրացում իրականացնելը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 219[1]-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 169.16.-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 169.16.-րդ հոդվածի 1-ին մասով, 219[1]-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով.

## ՈՐՈՇԵՑԻ

1. «Էդվարդ Գալստյան Կամոյի» անհատ ձեռնարկատիրոջը ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16.-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2.Պարտավորեցնել «Էդվարդ Գալստյան Կամոյի» անհատ ձեռնարկատիրոջը տուգանքի գումարը վճարել 900235401537 հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

7.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 14
ք.Վանաձոր